

Պ-262-22.05.2013,29.08.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հունիսի 15-ի ՀՕ-142-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը «տեղեկատվությունը.» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը հանդիսանում է հեղինակային իրավունքի օբյեկտ, եթե օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի արտահայտման ձևը հանդիսանում է ստեղծագործական աշխատանքի արդյունք:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22.1-րդ հոդվածով՝

«Հոդված 22.1. Լրատվական նյութի օգտագործման պայմանները

1. Տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի (ցանցային լրատվության միջոց) լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը այլ տպագիր լրատվական միջոցներում, ինտերնետային կայքերում թույլատրվում է իրականացնել միայն մեջբերման նպատակն արդարացնող ծավալով՝ առանց հեղինակի (հեղինակային իրավունքի իրավատիրոջ) համաձայնության եւ վարձատրության վճարման: Անկախ վերարտադրման ծավալից՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Վերարտադրումը պետք է բացառի լրատվական նյութի սկզբնաղբյուրի հնարավոր ընթերցողների քանակի եւ լրատվական նյութի օգտագործման ծավալների վրա բացասական ազդեցությունը: Լրատվական նյութի ամբողջական վերարտադրումը կարող է իրականացվել միայն հեղինակի (հեղինակային իրավունքի իրավատիրոջ) համաձայնության դեպքում: Լրատվական նյութի ամբողջական վերարտադրման կարգն ու պայմանները սահմանվում են կողմերի միջև կնքված պայմանագրով:

2. Տպագիր լրատվական միջոցներում, էլեկտրոնային կայքերում այլ տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս պետք է հղում կատարել լրատվական նյութի սկզբնաղբյուրին: Էլեկտրոնային կայքում տպագիր լրատվական միջոցների կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում տպագիր լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, եթե քաղվածքի նպատակը միայն սկզբնաղբյուր լրատվական նյութի վերարտադրությունն է: Էլեկտրոնային կայքերի

լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս էլեկտրոնային կայքի ակտիվ հղումի տեղադրումը, ինչպես նաև քաղվածքի վերնագրում էլեկտրոնային կայքի տիրույթային անվանման (դոմեյնի) նշելը պարտադիր է, եթե քաղվածքի նպատակը միայն սկզբնաղբյուր լրատվական նյութի վերարտադրությունն է:

3. Հեռարձակող կազմակերպության այն հաղորդումները, որոնք իրենց բնույթով ուղղված են մամուլի տեսության ներկայացմանը, պարտավոր են պահպանել սույն հոդվածով նախատեսված դրույթները:

4. Սույն հոդվածով նախատեսված դրույթները չեն տարածվում հերքման և /կամ/ պատասխանի իրավունքի իրականացման վրա:»:

Հոդված 3. Օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը «օրենքով սահմանված կարգով» բառերից հետո լրացնել «: Սույն օրենքի 22.1-րդ հոդվածի խախտման դեպքում վնասի հատուցումը կազմում է սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկը.» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱխԱԳԾԻ

| Առաջարկության հեղինակը | Հոդված, մաս, կետ | Առաջարկությունը | Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը կամ հիմնավորումը |
|------------------------|------------------|---|---|
| Միեր Շահգելոյան | Հոդված 2 | <p>Առաջարկվել է Նախագծի 1-ին կետի 1-ին և 2-րդ նախադասությունները լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.« Առանց հեղինակի համաձայնության և վարձատրության տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի լրատվական նյութերի քաղվածքների վերարտադրումը այլ տպագիր լրատվական միջոցներում, ինտերնետային կայքերում իրականացվում է միայն վերարտադրման բպատակն արդարացնող ծավալով:Անկախ վերարտադրման ծավալից լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի բուն լրատվական նյութը, բացի ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձին վերաբերող և(կամ առնչվող նյութին ի պատասխան հրապարակված նյութի դեպքում</p> | <p>Առաջարկը ընդունվել է, սակայն ենթարկվել է որոշ խմբագրական փոփոխությունների, մասնավորպես առաջարկի մի մասը տեղ է գտել Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսվող 22.1-րդ հոդվածի առաջին մասում, իսկ մյուս մասը՝ նոր 4-րդ մասում: Առաջակի համաձայն Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված 22.1-րդ հոդվածի առաջին մասում «նպատակն արդարացնող ծավալ» բառերից առաջ ավելացվել է «մեջբերման» բառը՝ դրանով իսկ ընդգծելով, որ Օրենքի դրույթները տարածվում են մեջբերման նպատակն արդարացնող ծավալի մասին:</p> |

| | | | |
|-----------------------|-----------------|---|--|
| <p>Միեր Շահգեղյան</p> | <p>Հոդված 2</p> | <p>Առաջարկվել է Նախագծի 1-ին կետի 1-ին և 2-րդ նախադասությունները լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.« Առանց հեղինակի համաձայնության և վարձատրության տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի լրատվական նյութերի քաղվածքների վերարտադրումը այլ տպագիր լրատվական միջոցներում, ինտերնետային կայքերում իրականացվում է միայն վերարտադրման բպատակն արդարացնող ծավալով:Անկախ վերարտադրման ծավալից լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի բուն լրատվական նյութը, բացի ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձին վերաբերող և(կամ առնչվող նյութին ի պատասխան հրապարակված նյութի դեպքում) »»</p> | <p>Առաջարկը ընդունվել է, սակայն ենթարկվել է որոշ խմբագրական փոփոխությունների, մասնավորապես առաջարկի մի մասը տեղ է գտել Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսվող 22.1-րդ հոդվածի առաջին մասում, իսկ մյուս մասը՝ նոր 4-րդ մասում: Առաջակի համաձայն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված 22.1-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանվել է «Սույն հոդվածով նախատեսված դրույթները չեն տարածվում հերքման և (կամ) պատասխանի իրավունքի իրականացման վրա:»:</p> |
|-----------------------|-----------------|---|--|